ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդները

Կատարող՝ Նատալյա Սարգսյան

Առարկա՝ Գերմաներեն
Ուսումնական հաստատություն՝ <<Սևանի Խ. Աբովյանի անվ. ավագ դպրոց>>

ՀՐԱԶԴԱՆ 2023

- ՀՀ հանրակրթական դպրոցներում գերմաներենի դասավանդման հիմնահարցերին նվիրված մեթոդական հետազոտություն:
- Ժամանակակից լեզվակրթության զարգացման միտումներ:
- Բանավոր գրագետ հաղորդակցման նպատակների իրականացման անհրաժեշտություն:

Հետազոտության օբյեկտը. Օտար լեզուների ուսուցման այլընտանքային ձևերն ու մեթոդները

Հետազոտության առարկան. Հաղորդակցականկարողունակությունների զարգացում:

Բովանդակություն

Դասավանդման մեթոդներ

1. Ինքնուրույն աշխատանքը որպես օտար լեզվի ուսուցման միջոց
2. Մեդիա
3. Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհայնացման գործընթացում մարդիկ հնարավորություն ունեն ազատ շփվել ինչպես համացանցում այնպես էլ կյանքում, իմացությունը դառնում է իրական արժեք՝ բարձր վարձատրվող աշխատանք ունենալու,տեղաշարժվելու և ճանապարհորդելու ինչպես նաև միջմշակույթային արդյունավետ հաղորդակցություն,փոխըմբռնում և համագործակցություն ապահովելու համար: Կյանքի յուրաքանչյուր ոլորտ այս կամ այն չափով կապված է օտար լեզվի հետ և ժամանակի հրամայականն է տիրապետել որևէ օտար լեզվի, որը մարդու առաջ նոր դռներ բացելու հնարավորություն է:

Ժամանակակից համացանցը և մուլտիմեդիա տեխնոլոգիաները խթանում են սովորողի անհատականացումը, նպատակասլացությունը,ինքնակառավարումը և ինքնադրսևորման հնարավորությունը:

Այսօր անհրաժեշտություն կա սովորողների մոտ ձևավորել ճանաչողական ինքնուրույն տարբեր խնդիրներ առաջադրելու և դրանք լուծելու կարողություն:

Այսօր համաշխարհային ցանցը տրամադրում է տեղեկատվական և հաղորդակցական բնույթի վիթխարի հնարավորություններ և ծառայություններ որոնք կարելի է հեշտությամբ կիրառել ուսումնական գործընթացում:

Այդ հնարավորությունների շնորհիվ ուսումնական գործընթացը տեղափոխվել է որակապես նոր մակարդակ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը օտար լեզվի դասին նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը,մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունների ճանաչողությանը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորությունները:Այսպիսով այլընտրանքային դասավանդման մեթոդով աշխատելիս դասավանդողը դադարում է գիտելիքի հիմնական աղբյուր լինելուց, քանի որ սովորողը ինքը պետք է կողմնորոշվի համացանցում և իր պահանջմունքներին համապատասխան աղբյուր գտնի, իսկ դասավանդողի հիմնական խնդիրն է աջակցել սովորողի անհատական զարգացմանը,նրա ստեղծագործական որոնումներին,զարգացնել սովորողի մոտ ինքնուրույն աշխատելու հմտություններ և կարողություններ:

Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերի նպատակային կիրառումը ենթադրում է սովորողների անհատական և խմբային աշխատանքի աճ, ավանդական դասից հեռացում, որտեղ գերակայում է բացատրա-նկարագրական դասավանդման մեթոդը, դեպի որոնողական և հետազոտական բնույթի գործնական և ստեղծագործնական աշխատանքի ծավալի ավելացում

ԳԼՈՒԽ 1

Դասավանդման մեթոդները

Դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ գոյություն ունեն: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում եմ3 խմբի՝

1. Պասիվ – այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության <<օբյեկտը>>, որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:
2. Ակտիվ – Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության <<սուբյեկտ>> և կատարում են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝ աշակերտին:
3. Փոխներգործություն – թույլ է տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց վրա: Այս մեթոդները համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներ, քանի ր վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում, ընդ որում և՛ աշակերտները, և՛ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ:)

Ուսուցիչը հաճախ ներկայացնում է կրթական գործընթացի կազմակերպչի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ ստեղծողի դերում: Նոր գիտելիքըև կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա:

Ըստ գործունեության տեսակի մեթոդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Բացատրական – զննական
2. Վերարտադրողական
3. Խնդրահարույց ուսուցման
4. Ուսուցանող – ճանաչողական գործունեության կազմակերպման
5. Խթանման և մոտիվացիայի
6. Վերահսկման և ինքնավերահսկման
7. Ինքնուրույն ճանաչողական գործունեության
8. Համակարգված ուսուցման

Ըստ կառուցվածքի և կիրառման մեթոդները լինում են՝

1. Բանավոր
    - Բացատրություն – բանավոր փոխադրության կամ վերարտադրության ձև է, որտեղ բացահայտվում են նոր հասկացություններ
    - Պատմվածք – ուսումնական նյութի ներկայացման ձև է, որը բացառապես նկարագրողական բնույթ ունի:
    - Տպագիր – բառի հետ աշխատանք (գիրք) – այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտին ուսուցչի ճանաչողական գործընթացը

Մեթոդների ուսումնասիրությունը, կարելի է փաստել, որ դրանք լեզվի ուսուցման կոնկրետ և անփոխարինելի միջոցներ են: Տվյալ գաղափարին է հատում նաև մեթոդաբան Ա. Սանչեսը, որը փաստում է, որ մեթոդն իրականում ոչ թե նպաակ է, այլ մեր առջև դրված նպատակներին հասնելու լավագույն միջոց: Սակայն այդ միջոցը պահանջում է ուսուցչի և աշակերտի սերտ փոխհամագործակցություն, այլապես միայն մեթոդիճիշտ ընտրությունը դեռևս բավարար չէ լեզվի ուսուցման ոլորտում դրական արդյունքի
հասնելու համար:

Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ վերանայել ու լրամշակել ուսուցման առկա մեթոդները, մոտեցումներն ու տեխնոլոգիաները, որոնք պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, կարող են կորցնել իրենց արդյունավետությունն ու արդիականությունը:

Ակնհայտ է, որ դրանց ճիշտ ընտրությունն ու կիրառումը հաղորդակցական ուսուցման գերակայության պայմաններում նպատակաուղղված է ուսուցման / ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը:

Ինչ վերաբերվում է տեղեկատվական տեխնելեգիաներին, ապա նշենք, որ դրանց գործածումը հնարավոր դարձրեց նաև օտար լեզուների հեռավար ուսուցումը:

Այսպիսով, վերջին մի քանի տարիների ընթացքում համակարգչային տեխնոլոգիաների նշանակությունն առօրյա կյանքում նկատելիօրեն աճել է, և դրանց հասանելիությունն այնքն է հեշտացել, որ գործնականում ամեն ոք, տանից դուրս չգալով, հնարավորություն ունի օգտվելու հսկայական տեղեկատվական ռեսուրսներից: Ըստ այդմ էլ, ժամանակին համընթաց, փոխվում են նաև դասավանդման մեթոդները՝ փորձելով սովորողներին զինել այնպիսի գիտելիքներով, որոնք ճանապարհ կհարթեն դեպի նրանց մասնագիտական առաջընթացը:

Գլուխ 2

Ինքնուրույն աշխատանքը որպես օտար լեզվի ուսուցման այլընտրանքային միջոց

Որպես օտար լեզվի այլընտրանքային ուսուցման միջոց դիտարկել եմ ինքնուրույն աշխատանքը և մեդիա գործիքները: Սրանք հավելյալ օգնող միջոց են դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման համար և ուսուցչին հնարավորություն են տալիս ուսուցումը դարձնել առավել արդյունավետ և հետաքրքիր:
21-րդ դարում այդպիսի միջոցների կիրառումը դասապրոցեսում դարձել է հրամայական պահանջ:
Ինքնուրույն արտադասարանական աշխատանքը ձևավորում է սովորողի ճանաչողական հետաքրքրությունը և ակտիվությունը, խթան է հանդիսանում հետագա զարգացման համար: Այսօր անհրաժեշտություն կա սովորողների մոտ ձևավորել ճանաչողական ինքնուրուններություն, դասից դուրս անհատական աշխատանքի հմտություն: Այդ աշխատանքը կարող է նախորդել կամ հաջորդել դասարանային աշխատանքին՝ դառնալով դրա բնական շարունակությունը և տրամաբանական ավարտը:
Կրթական գործընթացի կազմակերպման ժամանակակից միտումները պահանջում են ընդլայնել, բարելավել, պլանավորել սովորողի ինքնուրույն աշխատելու կարողությունը: Ինքնուրույն աշխատանքը ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս կարող է դառնալ և նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Գիտության արագընթաց զարգացման, տեղեկատվության անսահմանափակ հոսքի համատեքստում անհնար է անհատին ողջ կյանքի ընթացքում սովորեցնել: Առավել կարևոր է նրա մեջ խթանել գիտելիքների պաշար կուտակելու հետաքրքրություն, նրանց զինելով ինքնուրույն աշխատանք կատարելու համար անհրաժեշտ կարողություններով և հմտություններով:
Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես դասավանդման մեթոդ և որպես ուսումնական գործընթացի կազմակերպման այլընտրանքային ձև և որպես ճանաչողական գործունեության խթանման միջոց:
Կարևոր են նաև ինքնուրույն աշխատանքի վերահսկողության ձևերը, հաշվի են առնվում այնպիսի մեթոդաբանական խնդիրներ ինչպիսիք են ինքնուրույն աշխատանքի ձևերի ընտրությունը, չափանիշները, մասնագիտական առաջադրանքների յուրացման մակարդակի բացահայտումը և այլն:

Սովորողի ինքնուրույն աշխատանքը պետք է լինի նախապես պլանավորված գործընթաց, որի հաջող իրականացումը կախված է ուսուցման յուրաքանչյուր փուլում այն կազմակերպելու և դասավանդողի կողմից ընթացքը արհեստավարժ վերահսկելու կարողությունից:
Ինքնուրույն աշխատանք հասկացությունը բազմաբնույթ է, այն համարվում է և որպես ուսուցման կազմակերպման ձև, և որպես մեթոդ, և որպես ուսունական գործունության տեսակ:

Այնուամենայնիվ հետազոտողների մոտ ակնառու է ինքնուրույն աշխատանքի հետևյալ հատկանիշները.

- Ինքնուրույն գործունեությունը համարվում է ուսուցման առաջատար սկզբունք:

- Ստեղծագործական գործունեությունը հանդիսանում է ինքնուրույն գործունեության կազմակերպման անհրաժեշտ պայման:

- Սովորողը հանդիսանում է որպես ինքնուրույն գործունեության սուբյեկտ:

- Դրդապատճառները, նպատակները, պայմանները, գործողությունները, արդյունքըինքնուրույն աշխատանքի բաղադրիչներ են:

Ինքնուրույն աշխատանքը թույլ է տալիս լուծել օտար լեզուների դասավանդման մեթոդների այնպիսի հրատապ խնդիրներ ինչպիսիք են կառավարման, անհա-տականացման ուսման հարմարավետության խնդիրը:
Նման միջոցների օգտագործումը հնարավորություն է տալիս ապահովել օտար լեզվի անհատական ուսումնասիրությունը, բարձրացնում է սովորողի ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:
Նմանօրինակ միջոցները ուսուցման գործընթացում միջմշակութային բաղադրիչի ներմուծման հնարավորություն են ընձեռնում:

Ինքնուրույն աշխատանքի նպատակը և բովանդակությունը բխում են լեզվի ուսուցման ընդհանուր նպատակներից, ինչպես նաև նյութի վրա աշխատելու մասնավոր նպատակներից:
Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ սովորողի ինքնուրույն աշխատանքի ճիշտ և համակարգված կազմակերպումը, որը հիմնված է ակտիվ մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների օգտագործման վրա, զգալիորեն մեծացնում է օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը

Պրակտիկան ցույց է տալիս սովորողի շահագրգռվածությունը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ օտար լեզուների ինքնուրույն ուսուցման գործընթացում, որտեղ օպտիմալ կերպով ուսանողի կողմից օգտագործվում են ուսուցման ակտիվությունը, մատչելիությունը, ինչպես նաև զարգացնում են մտավոր գործողությունները և կարողությունները: Համացանցային ռեսուրսների ներգրավումը օտար լեզվի ինքնուրույն ուսուցման գոծընթացում թույլ է տալիս ընտրել կարդալու լսելու համար մասնագիտական ուղղվածություն ունեցող արդիական ուսումնական նյութեր, հետագայում պատրաստի ինտերակտիվ համակարգերի միջոցով դրանք ենթարկելով բառային և քերականական մշակումների: Որպես ինքնուրույն աշխատանքի օրինակներ կարող են լինել մինի պրոյեկտները, որոնք անցկացնում եմ միջին դասարաններում <<Naturschutz>> թեմայով: Դրանք անցկացնում եմ նախագծային աշխատանքի ձևաչաափով և կազմակերպում մրցույթներ տարբեր դասարանների միջև, որոնց տրվում նպատակային աշխատանք,արդյունքում սովորողները հարստացնում են բառապաշարը թեմայից, ապահովում է բնա-պահպանական դաստիարակություն և ծրագրի ավարտին յուրաքանչյուր դասա-րան ներկայացնում է զեկուցում իր կատարած աշխատանքի վերաբերյալ: Օգտվելով համացանցի ընձեռնած հնարավորությունից սովորողները սեփական նախաձեռնությամբ և ուսուցչի ուղղորդմամբ կարողանում պատրաստել պաս-տառներ, որոնք փակցնելով դպրոցի պատերին օգնում են մյուս ընկերներին հարստացնել իրենց բառապաշարը և գիտելիքները: Ավագ դպրոցում ինքնուրույն աշխատանք եմ հանձնարարել <<Die grossen deutschen Komponisten >> թեմայով, դասարանում անցկացնում եմ դասական երաժշտությանը նվիրված երեկո և զեկույց գերմանացի կոմպոզիտորների կյանքի և ստեղծագործական ուղու մասին: Լսում ենք հայնի դասական գործեր: Այսպիսի աշխատանքները նպաստում են սովորողների մոտ ոչ միայն լեզվի գիտելիքների հարստացմանը այլև դաստիարակում են գեղագիտական ճաշակ ապահովում են միջմշակույթային կապը:

Այս օրինակների հետազոտումից պարզ է դառնում, որ ինքնուրույն աշխատանքը սովորողների մոտ զարգացնում հաղորդակցական կարողունակությունը, ապահովումէ միջմշակո

ԳԼՈՒԽ 3

Այլընտրանքային դասավանդման մեթոդ է նաև ինֆոհաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթության մեջ:
Երրորդ հազարամյակի սկզբին բնորոշ է այն գիտակցումը, որ ինտելեկտուալ ներուժը քաղաքակրթության զարգացման հիմնական գործոնն է:
Ժամանակակից կրթությունը պետք է ապահովի արհեստավարժության և կարողունակության բարձր մակարդակ ունեցող անհատի ձևավորում:
Նախատեսում ենք, որ տեղեկատվական և հաղորդակցական մեդիա տեխնոլոգիաները շուտով կդառնան ուսումնական գործընթացի ,,առանցք'' և անհրաժեշտ է սովորողների շրջանում ձևավորել ընդհանուր տեղեկատվական մշակույթ, զարգացնել տեղեկատվական հաղորդակցման կարողությունները:
Մեդիա տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն կտա լուծել մի շարք կիրառական խնդիրներ՝ բարձրացնել սովորողի ակտիվ դերը տարբեր տեսակի գործողությունների մեջ, զարգացնել մոտիվացիա, որն իր հերթին ազդում է ուսումնական գործընթացի որակի բարձրացման վրա:
Մեդիա տեխնոլոգիաների շնորհիվ մարդը կարող է ստանալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ շատ կարճ ժամանակում:
Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է տալիս ինտերակտիվ ուսուցումը բաշխել մուլտիմեդիա դասերի ցանցի կամ սկավառակների, ինտերնետի միջոցով:
Չպետք է մոռանալ, որ առանց կրթական ոլորտ մեդիա տեխնոլոգիաների ներդրմանը, անհնար է պետության ներդաշնակ մուտքը համաշխահային հանրություն:
Ձևավորվել և սրընթաց զարգանում է համաշխարհային կրթական համակարգի ենթակառուցվածքը, որի հիմնական օղակը համացանցն է: Այս գործիքի շնորհիվ հնարավոր է ցանկացած ամենահեռավոր երկրի կենտրոնից կազմակերպել և կառավարել ուսումնական գործընթացը:
Տեղեկատվական մշակույթը և տեղեկատվական տեխնոլոգիաների և հիբրիդային հետախուզական համակարգերի վրա հիմնված գիտելիքների կոլեկտիվ կառավարման հմտությունների ակտիվ դերի բարձրացման համար:

Ուսուցիչը պետք է իր ամենօրյա ինքնակրթության շնորհիվ զարգացնի իր գիտելիքները այս ոլորտում: Գերմաներենը որպես օտար լեզու սովորել սովորեցնելու համար:

Մեդիա մեթոդի կիրառումով տեսողական ուսումնական նյութը դասասենյակ մտցվեց սլայդների, ֆիլմերի և հեռուստատեսության միջոցով: Այժմ առաջին անգամ սովորողները տեսան վավերական պատկերներ ավելի մեծ մասշտաբով, լսեցին տարբեր մարդկանց, որոնք խոսում էին մայրենի լեզվով , տեղեկություններ ստացան այն համատեքստի մասին, որում օգտագործվում էր լեզուն:
Ժամանակակից օտար լեզուների դասավանդման դեպքում այլևս այդպես չէ ինչպես նախկինում,այժմ կարելի է գերմաներեն լեզուն ուսումնասիրել լրատվա-միջոցների միջոցով: Գերմաներեն լեզուն հնարավորինս լավ և իրատեսական մատուցելու համար կան բազմաթիվ եղանակներ՝ սովորողներին դրդելու, ազդակներ հաղորդելու, հույզեր առաջացնելու և համատեղ փորձի միջոցով հաղորդակցությունը խթանելու համար:
Տեղեկատվությունները ներկայացվում և մշակվում են զլմների կողմից տեղադրվում են ընթացիկ համատեքստում և ուղղակիորեն քննարկվում թվային տեղնոլոգիաների ներդրմամբ այս հնարավորությունները բազմապատկվել են:
Թվային մեդիան թույլ է տալիս սովորողներին հարաբերվել միմյանց հետ և լսել լեզվայինը, ժողովրդի լեզվական արտասանությունը և միջավայրի տպավորություն ստեղծել: Հետևյալ գրաֆիկը ցույց է տալիս, թե թվայնորեն տրամադրվող ուսումնական նյութերը կարելի է կիրառել լեզվի դասերին:
Դասի նպատակին կարելի հասնել ուսումնական տարբեր միջոցներով և դսավանդման տարբեր մեթոդների կիրառմամբ: Ներկայումս միջազգային ասպարեզում տիրող իրավիճակը թելադրում է լեզվական կրթության բովանդակության արդիականացումը: Հայաստանի հասարակությունը դարձել էբաց և պատրաստ է միանալ միջմշակույթային երկխոսությանը, ուստի փոխվելէ օտար լեզվի նկատմամբ վերաբերմունքը և փոխվել է դրա դերը կրթության համակարգում: Լեզուն պարզապես կապի միջոց չէ,այլև մեկ այլ մշակույթ հասկանալու բանալին: Նա հանդես է գալիս որպես աշխարհի նկարը իմանալու միջոց, հասկանալով մեկ այլ մարդու արժեքներն ու ժառանգությունը:

- Գիտակցի օտար լեզվի դերն նշանակությունը մարդկության զարգացման առաջընթացի գործում:

- Գիտակցի օտար լեզվի դերը առրյա կյանքում

Կարևորի օտար լեզվի դերը այլ առարկաների ուսումնասիրության համար:

Որոնք են գերմաներենի դասին թվային մեդիայի օգտագործման նպատակները

- Տեսանյութեր ինտերնետում

- Սովորողները լսում են գերմաներեն

- Սովորողները ունեն արտասանական օրինակներ մայրենի լեզվից

Հավանաբար թվային լրատվամիջոոցների հետ գործ ունենալու համար կարևոր է բաց

լինել նորարարությունների համար և միևնույն ժամանակ թերահավատ:
Միայն այն պատճառով որ հասանելի է նոր միջոց, չի նշանակում, որ այն կարելի է իմաստալից կերպով ինտեգրել դասարանին:
Այս միջոցի շնորհիվ կիրառվում է առաջին հերթին այսպես կոչված դեդեկտիվ առաջնահերթությունը լրատվամիջոցների հետ աշխատելը դասասենյակում իմաստ ունի, միայն եթե այն աջակցում է ուսմանը: Այժմ առավել մանրամասն անդրադառնանք գերմաներեն դասին թվային մեդիայի օգտագործմանը:
Հաստատված դասագրքային նյութերը սովորաբար առանձնահատուկ դեր են խաղում ուսումնական գործնթացը կազմակերպելու համար: Ուսումնական նյութերն ու մեդիան անընդհատ զարգանում են թվային աճի շնորհիվ:
Առանձին քննարկման թեմա է նաև, թե ինչ տեքստեր ընտրել և ինչպիսի նշանակություն կարող են դրանք ունենալ օտար լեզվի ուսուցման համար:
Ինչպիսի չափանիշներ են կարևոր տեքստի ընտրության համար, ինչպիսի տեղեկատվություն են դրանք պարունակում:
Օրինակ բառապաշարային և երկրագիտական նյութերին վերաբերվող տեքստերը կարող են շատ տարբեր լինել: Յուրաքնչյուր ուսունական նյութ պարունակում է քերականական կառուցվածք:
Այսպիսով ուսումնական նյութերը էապես տարբերվում են իրարից, և ամեն բան կախված է սովորողի և ուսուցչի որակներից և նյութի գնահատումից, սովորող-ների խմբի և ուսուցանվող նյութի նպատակների հստակեցումից:
Այսպիսով լեզվական մակարդակի իմացության համար գոյություն ունի եվրոպա-կան միասնական լեզվի իմացության վեց մակարդակներ:

A1- լեզվի իմացության տարրական մակարդակ

A2- լեզվի իմացության տարրական մակարդակ

B1- լեզվի գործացության մակարդակ

B2- լեզվի գործացության մակարդակ

C1- լեզվի իմացության ամբողջական գործացության մակարդակ

C2-լեզվի իմացության ամբողջական գործացության մակարդակ

Ըստ այս մակարդակների տարանջատում ենք լեզվի իմացության

հետևյալմակարդակները

- սկսնակ
- միջին մակարդակ
- բարձր մակարդակ

Օտար լեզուների դասավանդման այլընտրանքային մեթոդներ առավելությունները և թերությունները

Բնական լեզվի յուրացման ժամանակ մարդիկ սովորում են օտար լեզուն իրենց միջավայրի հետ փոխազդեցության միջոցով: Այդ փոխազդեցությունները ուսումնասիրվում են և կոչվում են լեզվական ներդրումներ: Դասապրոցեսը բաղկացած է նյութերից և մեթոդներից: Երեխաների մոտ լեզուն զարգանում է ծնողների, հարազատների և այլ երեխաների հետ շփվելու միջոցով, ուսումնական նյութը ,,բխում է'' երեխայի միջավայրից: Երեխաները հեշտությամբ են յուրացնում այն բարդ կանոնները որոնք հասուն տարիքում օտար լեզուներ սովորողները պատրաստվում են ,,ճիշտ'' օգտագործել:

Լեզվական նյութը, որով երեխան սովորում է օտար լեզուն բխում է նաև երեխաների հաղորդակցական առօրյայից: Երեխաները օտար լեզուն սովորում են միայն այն ժամանակ, երբ լեզվի ուսուցման տարրերը կարդալը, գրելը, լսելը, խոսելը համակցված կերպով գործում են ուսունական նյութի օգնությամբ: Դասագրքերում և վարժություններում ներկայացվում են երկխոսություններ, տեքստեր, նկարագրված են քերականական նյութեր, որոնց միջոցով սովորողները կկարողանան տիրապետել լեզվին: Ուսունական նյութերը կարող են լինել դասագրքի տեքստեր, նկարազարդումներ, ֆիլմեր և այլն:

Դրանք կարող են հատուկ պատրաստված լինել դասարանում սովորելու համար, բայց կան նաև ուսումնական նյութեր, ինչպիսիք են օրինակ թերթերի հոդվածները, ռադիոհաղորդումները և այլն, որոնք գրվել են իրականում այլ նպատակներով, սակայն կարող են օգտագործվել նաև լեզվի ուսուցման համար՝ որպես ուսումնական նյութ:

Մեդիա տերմինը կարող ենք սահմանել հետևյալ կերպ՝ միջոցներ, որոնցով փոխադրվում են բովանդակությունը, առաջադրանքները, որոնք նպաստում են գիտելիքների և հմտությունների ձևավորմանը:

Օրինակ՝ ռադիոյի միջավայրում կարելի է գտնել ռադիոհաղորդում որպես ուսումնական նյութ, որով կարելի է լսել՝ զարգացնելով լսողական ըմբռնումը:

Առավելությունները և թերությունները քննարկելիս պետք է հաշվի առնել մեր նպատակադրումները:

- Ինչ հարց ենք ուզում լուծել
- Ինչ հմտություն և կարողություն ենք ուզում զարգացնել
- Որ թիրախային խմբի համար է նախատեսված տվյալ նյութը

Ընտրված նյութերը պետք է պարունակեն բավարար քանակով անհրաժեշտ ինֆորմացիա և չծանրաբեռնեն աշակերտին: Ի տարբերություն դասագրքով ուսումնասիրվող նյութի, որտեղ ուսումնասիրվող նյութը խիստ կանոնակարգվածէ, այստեղ ուսուցիչն է որոշում բազմապիսի

առաջադրանքներից ընտրել տվյալ տարիքային խմբին համապատասխան նյութը և նյութի չափը:
Ինքնուրույն աշխատանք կատարելիս կամ մեդիա ռեսուրսներ օգտագործելիս սովորողը ինքն է դառնում տեղեկատվության կրողը և փոխանցողը:
Ցանկացած դեպքում միայն մեկ մեթոդի կիրառումը չի հանգեցնի նպատակին հասնելու առավելագույն արդյունավետությանը:
Օրինակ կարելի է ավանդական և ժամանակակից, այլընտրանքային մեթոդները համադրել:
Հանձնարարում եմ սովորողներին դասագրքային նյոութի հիման վրա պատրաստել տեսասահիկ և ներկայացնել դասարանում: Այս ձևաչափով աշխատանքները կարելի է կազմակերպել, օրինակ երկրագիտական թեմաներով, քերականական նյութի վերաբերյալ և ստանալ ավելի գոհոցնող արդյունք:
Կարելի օգտագործել նաև համացանցի ներուժը և ներկայացնել նյութին վերաբերվող նկարներ և տեսանյութեր:

Եզրակացություն

Ուսուցիչը պետք է իր ամենօրյա ինքնակրթության շնորհիվ զարգացնի իր
գիտելիքները:Գերմաներենը որպես օտար լեզու սովորել սովորեցնելու համար անհրաժեշտ են հետեւյալ հատկանիշները՝
Որպես բազային որակավորում ուսուցիչը պետք է ունենա.
1.Սովորեցնելու եւ դասապրոցեսը կազմակերպելու հմտություններ
2. Գերմաներենը որպես օտար լեզու սովորեցնելու կարողություն
3. Գերմաներենը որպես օտար լեզու ուսուցանելու, դասը պլանավորելու ստեղծագործական մոտեցում
4.Առաջադրնքներ եւ վարժությունների կիրառելու հմտություն
5. Ուսումնական նյութեր եւ այլընտրանթային մեթոդներ կիրառելու կարողություն
Այս հատկանիշները պետք է դիտարկել որպես դասապրոցեսի գլխավոր դերակատար:
Այս բացառիկ հատկանիշները զարգացնում են նաեւ այլ հատկանիշներ, որոնց միջոցով սովորողները կարող են խորացնել իրենց գիտելիքները եւ կարողությունները: Ալտերնատիվ դասավանդման մեթոդները նույնպես կարող են դիտարկվել որպես այս նպատակին հասնելու միջոց: Այլընտրանքային մեթոդների նկատառումների հիմքում ամբողջությամբ մարդն է, դասի մարդասիրական դաստիարակչական կողմերը եւ դասապրոցեսի նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտի ձեւավորումը:
Ուսուցիչը պետք է ձեւավորի վախից ու սթրեսից զերծ բարոյահոգեբանական մթնոլորտ:Ուսուցումը պետք է հաստատի եւ պահպանի ներդաշնակությունն ու փոխըմբռնումը:
Դասապրոցեսի դասավորվածությունը եւ կառուցվածքը պետք է նախապես եւ վաղօրոք մշակված լինեն:
Ուսուցչի դերը կայանում է որպես հրահանգավորող եվ որահսկող:Լեզվի ուսուցման նյութի կառուցվածքը պետք է բաժանել մանր մասերի ե հնարավորինս մատչելի ուսուցանել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Հանրակրթական ավագ դպրոցի չփորոշիչներ և ծրագրեր
- Lernmaterialien und Medien /Dietmar Rosler, Nicola Wurffel/
- Ի.Վ. Ռախմատովա
- Բելյակովա, Կոժուգիկովա 2017 /86-88/
- Սմիրնովա 2015 /155-160/